

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
<<ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ**

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) <<Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն>> մասնաճյուղը (այսուհետ՝ մասնաճյուղ) հիմնադիրը հանդիսանում է <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամբ:
2. Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ և համալսարանի անունից լիազորված է իրականացնելու համապատասխան գործունեություն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
3. Մասնաճյուղը, որպես համալսարանի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, ունի իր անվամբ դրոշմակնիք, **կլոր կնիք** և այլ վավերապայմաններ:
4. Համալսարանի և մասնաճյուղի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Համալսարանի և սույն կանոնադրությամբ:
5. Մասնաճյուղի կանոնադրությունը՝ հաստատվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
6. Մասնաճյուղի անվանումն է.

հայերեն լրիվ՝ <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամ
<<Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն>> մասնաճյուղ.

հայերեն կարճ՝ ՀԱԱՀ ԽՊԳ ԳԿ մասնաճյուղ.

ռուսերեն լրիվ՝ „Научный центр виноградоплодовиноделия” фонд „Национальный аграрный университет Армении”.

ռուսերե կարճ՝ НИЦ ВИП и В НАУА.

անգլերեն լրիվ՝ <<Scientific centr of viticulture, fruit growing and winemaking dranch of Armenian National Agrarian University>> foundation.

անգլերեն կարճ՝ SCVFW branch of ANAU.

7. Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան:

**II ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ,
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

8. Մասնաճյուղի նպատակն է իր մասնագիտացմանը համապատասխան գիտական, գիտատեխնիկական հետազոտություններ կազմակերպելն ու իրականացնելը:

9. Նշված նպատակին համապատասխան մասնաճյուղի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են.

ա) մշակել գիտական, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան, հետևել օրացուցային պլանով գիտական թեմաների կազմակերպման ընթացքին, բաժինների և լաբորատորիաների նյութատեխնիկական և ֆինանսական ապահովվածությանը.

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գիտական, գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղությունների և գիտահետազոտական ծրագրերի մշակումը և իրականացումը իր խնդիրների շրջանակներում.

գ) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ու մշակումների արդյունքների կիրառմանն աջակցող պայմանների ստեղծումը.

դ) երիտասարդ գիտաշխատողների խրախուսման, նրանց կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների աջակցության ապահովումը.

ե) կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի փոխգործակցվող, ներդաշնակ համակարգի ձևավորումը.

զ) գիտական արդյունքի ապրանքայնացմանը նպաստող մեխանիզմների մշակումը և իրականացումը

է) ագրարային ոլորտի ձեռնարկությունների հետ պայմանագրային հիմունքներով հետազոտությունների ծավալի մեծացումը.

ը) ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից գիտահետազոտական աշխատանքներին տրվող ֆինանսական միջոցների առավել նպաստակային և արդյունավետ օգտագործումը, համակարգելով կատարվող գիտական ծրագրերն ու թեմաները, խուսափելով կրկնություններից.

թ) ներկայացվող գիտական հայտերի և հաշվետվությունների ավելի հաճախակի քննարկումների իրականացումը.

ժ) միավորելու գիտաշխատողների ներուժը և մասնաճյուղի նյութատեխնիկական բազան (գիտական ուսումնական սարքավորումներ, լաբորատորիաներ, վարելահողեր, փորձադաշտեր և այլն):

ի) գիտահետազոտական աշխատանքների բնականոն ընթացքի ապահովման, հետագա զարգացման և բնականոն սերնդափոխության ապահովման համար առաջարկություններ ներկայացնել մասնաճյուղի համապատասխան աշխատողներին ուսումնական գործընթացում ներգրավելու, իսկ համալսարանի դասախոսներին, ասպիրանտներին, մագիստրանտներին գիտահետազոտական ծրագրերում ընդգրկելու մասին, օգտագործելով մասնաճյուղի հետազոտական և արտադրական հնարավորությունները, նաև ուսումնական և արտադրական պրակտիկաների համար:

10. Մասնաճյուղի գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են.

10.1 խաղողագործության, պտղաբուծության սելեկցիոն արժեքավոր սորտերի տնկանյութի աճեցումը, բազմացումը, ագրոտեխնիկական նորագույն տեխնոլոգիաների մշակումը, կատարելագործումը, գինեգործության և կոնյակագործության բնագավառում նոր գինիների և կոնյակների ստացումը, այդ բնագավառում նոր տեխնոլոգիաների մշակումը, հին տեխնոլոգիաների կատարելագործումը և այլն,

10.2 միջավայրի անբարենպաստ գործոնների նկատմամբ խաղողի և պտղատու տեսակների խմբային դիմացկունությամբ բարձր արդյունավետ, մրցունակ սորտերի ստեղծումը և այլն,

10.3 խաղողի և պտղատու մշակաբույսերի հիմնական հիվանդությունների և վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի տեխնոլոգիաների մշակումը,

10.4 ոչ ավանդական հումքից էթիլ-սպիրտի ստացման տեխնոլոգիայի մշակումը,

- 10.5** բազմամյա մշակաբույսերի (խաղողի, պտղի տեսակների) գենոֆոնդի պահպանման և համալրման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,
- 10.6** խաղողի և պտղատու հիմնական մշակաբույսերի տնկանյութի արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների խորհրդատվական և գործնական օգնության ցուցաբերումը մարզերի գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսություններին՝ միջավայրի անբարենպաստ գործոններից (ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ) վնասված խաղողի և պտղատու այգիների վերականգնման, ինչպես նաև արտադրության վարման արդյունավետության բարձրացման հարցերում:
- 11.** Իր առջև դրված խնդիրներին համապատասխան մասնաճյուղն իրավասու է.
- ա)** Համալսարանի միջոցով համագործակցել հայրենական և միջազգային գիտական կազմակերպությունների հետ և մասնակցել վերջիններիս կողմից հայտարարված մրցույթներին և այլ միջոցառումներին,
 - բ)** իրականացնել Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված, գիտափորձական, գիտաարտադրական, արտադրանքի իրացման, խորհրդատվության մատուցման ձեռնարկատիրական գործունեության տեսակները:
- 12.** Սույն կանոնադրության 11-րդ կետում նշված գործունեությունը մասնաճյուղը իրականացնում է Համալսարանի կողմից տրված լիազորությունների շրջանակներում:
- 13.** Մասնաճյուղի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
- 14.** Մասնաճյուղը պարտավոր է.
- ա)** գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև Համալսարանի և մասնաճյուղի կանոնադրություններին և ներքին իրավական ակտերին համապատասխան,
 - բ)** օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն, հաշվապահական հաշվառում, տեղեկություններ և համապատասխան հաշվետվություններ ներկայացնել համապատասխան մարմիններին,
 - գ)** ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը,
 - դ)** ապահովել աշխատողների աշխատանքի և հանգստի նորմալ պայմաններ,

ե) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

15. Մասնաճյուղի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Մասնաճյուղի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

17. Համալսարանը մասնաճյուղի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված գիտական, գիտատեխնիկական, գիտամեթոդական հարցերի համակարգման ու կառավարման իր գործառնություններն իրականացնում է Համալսարանի գիտական աշխատանքները համակարգող կառույցի միջոցով:

18. Մասնաճյուղի կառավարման մարմիններն են մասնաճյուղի գիտատեխնիկական (գիտական) խորհուրդը և տնօրենը:

19. Մասնաճյուղի գիտատեխնիկական (գիտական) խորհուրդը մասնաճյուղի տնօրենի նախագահությամբ գործող, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կատարման մարմին է: Գիտատեխնիկական (գիտական) խորհրդի լիազորությունների ժամկետն երեք տարի է: Գիտատեխնիկական (գիտական) խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

20. Մասնաճյուղի գիտատեխնիկական խորհուրդը.

ա) մշակում և Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում մասնաճյուղի կանոնադրությունը, առաջարկություններ է ներկայացնում դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման վերաբերյալ.

բ) տնօրենի ներկայացմամբ հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները.

գ) մշակում է մասնաճյուղի զարգացման, ինչպես նաև միջազգային համագործակցության գլխավոր ուղղությունները և ներկայացնում է Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը.

դ) քննարկում է մասնաճյուղի գիտական գործունեության հիմնական ուղղությունները, լսում հաղորդումներ կատարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների մասին և համապատասխան առաջարկություններ ներկայացնում Համալսարանի գիտական խորհրդին.

ե) Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում՝ առաջարկություններ մասնաճյուղի գիտական կազմը սահմանված կարգով համալրելու, Համալսարանի պատվավոր կոչումներ ու մրցանակներ շնորհելու մասին.

զ) քննարկում է մասնաճյուղի գիտական և ֆինանսատնտեսական տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը, որը Համալսարանի տարեկան հաշվետվության հետ համատեղ ներկայացվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը.

է) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող գիտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

21. Մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի անդամների ընդհանուր թվաքանակը չի կարող գերազանցել 13-ը, բայց ոչ պակաս 9-ից:

Գիտատեխնիկական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են մասնաճյուղի տնօրենը, փոխտնօրենները, գիտական քարտուղարը (քարտուղար), բաժինների, լաբորատորիաների վարիչները և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ, Համալսարանի աշխատակիցներ, արտադրության ներկայացուցիչներ: Նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտատեխնիկական խորհրդի անդամների թվակազմի 50 %-ը:

Մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի նիստը համարվում է իրավագոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ ընթացքում տնօրենի և մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը տեղափոխվում է Համալսարանի գիտական խորհուրդ, որտեղ դրա քննարկմանը մասնակցում են նաև մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի անդամները: Մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի ընդունված որոշումները կենսագործվում են տնօրենի հրամաններով:

22. Մասնաճյուղի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, պաշտոնի է նշանակվում ռեկտորի հրամանով՝ 5 տարի ժամկետով:
23. Ռեկտորի և տնօրենի միջև սահմանված կարգով կնքվում է աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով, որով նախատեսվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները Համալսարանի հետ և նրա աշխատանքի վարձատրության պայմանները:
24. Մասնաճյուղի տնօրենը՝
- ա) Կազմակերպում է մասնաճյուղի գործունեությունը և օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն, գործում է մասնաճյուղի անունից, ներկայացնում է դրա շահերը.
 - բ) իրեն տրված իրավասությունների սահմաններում արձակում է կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է աշխատողների համար:
 - գ) ապահովում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի և մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի որոշումների և սեկտորի հրամանների կատարումը.
 - դ) կազմակերպում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.
 - ե) հրավիրում է մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի նիստեր.
 - զ) Համալսարանի լիազորությամբ, Համալսարանի անունից կնքում է պայմանագրեր.
 - է) Համալսարանի ռեկտորին առաջարկություն է ներկայացնում մասնաճյուղի բոլոր աշխատակիցներին աշխատանքի նշանակելու և աշխատանքից ազատելու մասին:
 - ը) ըստ բնագավառների կատարում է աշխատանքի բաշխում փոխտնօրենների և մյուս ղեկավար աշխատողների միջև: Իր բացակայության ժամանակ տնօրենի ռեկտորի հրամանով պարտականությունները կատարում է փոխտնօրեններից մեկը.
 - թ) Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում մասնաճյուղի գիտական և ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը:
 - ժ) իրականացնում է մասնաճյուղի ֆունկցիոնալ գործունեությունից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի և սույն կանոնադրությանը չհակասող այլ լիազորություններ.
 - ի) մասնաճյուղի տնօրենը ի պաշտոնե Համալսարանի գիտական խորհրդի անդամ է:

IV ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

25. Մասնաճյուղի կառուցվածքը և հաստիքացուցակը մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի առաջարկությամբ և Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի խորհրդի որոշմամբ՝ Համալսարանի կառուցվածքի հետ համատեղ: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմը և իրավասությունները որոշվում են Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով:
26. Մասնաճյուղի գիտատեխնիկական խորհուրդը Համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի կառուցվածքում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, ինչպես նաև լուծարելու վերաբերյալ:
27. Մասնաճյուղի բաժին, բաժանմունք, լաբորատորիա, փորձակայան, ստեղծվում է մասնաճյուղի գիտատեխնիկական խորհրդի առաջարկությամբ՝ Համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում ամբիոններ կամ ամբիոնի սեկտորներ մասնաճյուղում տեղակայելու համար:

V ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Մասնաճյուղում գիտական, գիտատեխնիկական արտադրական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն կանոնադրության և համապատասխան կանոնակարգերի համաձայն:
29. Մասնաճյուղի գիտական, գիտաարտադրական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝
- ա) պետական բյուջեից.
 - բ) պայմանագրերից գոյացած միջոցներից, Համալսարանի արտաբյուջետային միջոցներից, որոնք տրամադրվում են հրատապ խնդիրների (ծրագրերի)

իրականացման համար, պայմանով, որ այդ գումարները վերադարձվում (վերականգնվում) են մասնաճյուղի կողմից:

զ) արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումներից դրամաշնորհներից, նվիրատվություններից և այլն.

դ) սույն կանոնադրության 11-րդ կետով նախատեսված և օրենքով չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցներից.

ե) գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցներից:

30. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել մասնաճյուղի և Համալսարանի աշխատողները, ուսանողները, մագիստրանտները, ասպիրանտները, ինչպես նաև պայմանագրային կարգով հրավիրված մասնագետները:

31. Մասնաճյուղի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

VI ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

32. Մասնաճյուղի գույքն են կազմում Համալսարանի կողմից օգտագործման նպատակով տրված հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև մասնաճյուղի գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքը: Մասնաճյուղի գույքը Համալսարանի գույքն է:

33. Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են.

ա) Համալսարանի կողմից օգտագործման նպատակով հատկացված գույքը.

բ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մասնաճյուղին հատկացված Համալսարանի արտաբյուջետային միջոցները, ինչպես նաև Համալսարանի արտաբյուջետային միջոցները (վերականգնվող միջոցներ):

գ) միջոցներ, որոնք գոյանում են վճարովի հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից.

դ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները և կտակված գույքը.

ե) Համալսարանի համաձայնությամբ աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից և սույն կանոնադրությամբ նախատեսվող Համալսարանի կողմից երաշխավորված այլ տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

34. Մասնաճյուղի գործունեության շրջանակներում բոլոր ֆինանսական գործառնությունները և ծախսերը (աշխատավարձի վճարում, գույքի ձեռք բերում, տնտեսական գործառնական այլ ծախսեր և վճարումներ) կատարվում են բացառապես մասնաճյուղի ֆինանսական մուտքերի (ռեսուրսների), Համալսարանի արտաբյուջետային (վերականգնվող միջոցներ) և ՀՀ պետբյուջեից մասնաճյուղին հատկացված միջոցների հաշվին: Այդ նպատակով բանկային հիմնարկությունում բացվում է ընթացիկ հաշիվ, որտեղից ստացված գումարները կարող են ծախսվել ըստ Համալսարանի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

35. Մասնաճյուղը Համալսարանի կողմից սահմանված կարգով պլանավորում և կազմակերպում է իր տնտեսական գործունեությունը, մատուցում է ծառայություններ, կատարում աշխատանքներ, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կարգով կատարելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենքով պաշտպանվող իրավունքները խախտելու համար:

36. Մասնաճյուղը ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարումներ, կատարման ինչպես նաև աշխատողների աշխատանքի և հանգստի համապատասխան պայմաններ:

37. Հաշվապահական հաշվառման օրենքի համապատասխան, Համալսարանի կողմից սահմանված կարգով, մասնաճյուղը վարում է հաշվապահական հաշվառում, հաշվետու է համալսարանին, նրա հաշվետվության և հաշվեկշռի տվյալները մտնում են Համալսարանի հաշվետվության և հաշվեկշռի մեջ: Հարկային կենսաթոշակային համակարգի մարմիններին տրվող հաշվետվությունները ներկայացնում է Համալսարանը:

38. Մասնաճյուղին տրված գույքը կարող է տնօրինվել միայն Համալսարանի համաձայնությամբ:

Մասնաճյուղը պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այդ գույքին պատճառված վնասի համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

39. Աշխատողների վարձատրության չափը, հաստիքները և վճարման կարգը մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի ռեկտորը:

40. Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

VII ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱԸՑՈՒՄԸ

41. Մասնաճյուղի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմավորումը և լուծարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: